ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N: ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԳՀԾՁԲ-22/26-1

ք. Երևան «16» 12 2022 թ.

ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեի «Ջրառ» ՓԲԸ-ը, ի դեմս տնօրեն Ա. Աբգարյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), և «ԲԻՄ ԻՆԺԵՆԵՐԻՆԳ» ՍՊԸ -ն, ի դեմս տնօրեն Ա. Մկրտչյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Արզնի-Շամիրամի մայր ջրանցքի մաքրման և ընթացիկ նորոգման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 2000000 (երկու միլիոն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում գնման դիմաց վճարումն իրականացվում է սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման

ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն

5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 10 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ՏԿԵՆ ՋԿ «Ջրառ» ՓԲԸ	<<ԲԻՄ ԻՆԺԵՆԵՐԻՆԳ>> ՍՊԸ
Երևան, Վարդանանց փակուղի 8	ք. Երևան, Ավան-Առինջ,1-ին միկրո 1/7,5
«Արդշինբանկ» ՓԲԸ, Նալբանդյան մ/ճ	<<ԱՅԴԻԲԱՆԿ>> ՓԲԸ ՆՈՐ ՆՈՐՔ մ/ճ
h/h 2479000059160000,	Հ/h11808011522300
ՀՎՀՀ 00093621	ՀՎՀՀ 00917131
Տնօրեն	Տնօրեն
---------- Ա. ԱԲԳԱՐՅԱՆ	---------- Ա. Մկրտչյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
« 16 » 12 2022 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը**
1	71241200/8	Արզնի-Շամիրամի ջրանցքի մաքրման և ընթացիկ նորոգման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում	դրամ	2000000	1	ք. Երևան, Վարդանանց փակուղի 8	մինչև 2022 թ. դեկտեմբերի 25

I. Ջրանցքի համառոտ նկարագիր

Արզնի-Շամիրամի մայր ջրանցքը հատում է գ. Նոր Արտամետ, գ. Քանաքեռավան, գ. Մրգաշեն, ք. Եղվարդ, գ. Նոր Երզնկա, գ. Կապսի, գ. Բազմաղբյուր, գ. Բյուրական, գ. Աղձք, գ. Ուջան, գ. Կոշ, գ. Արուճ, գ. Պարտիզակ, գ. Բազմաբերդ բնակավայրերը:

Ջրանցքի երկարությունը. I և II հերթերը միասին կազմում են 89,1 կմ, երեսապատվածքը՝ մոնոլիտ բետոնով և ե/բ սալիկներով: Կտրվածքի չափերը գլխամասում՝ b=1,7 մ, B=7,7մ, h= 3,07 մ, ջրթողունակությունը՝ 28,2 խմ/վ:

Ջրանցքը շահագործվում է 1957 թ., ունի դյուկերներ - 20 հատ, ակվեդուկներ - 43 հատ, ջրթողներ- 86 հատ, հեղեղահեռներ - 18 հատ, կամուրջներ- 50 հատ և այլ 16 կառուցվածքներ:

II. Տեխնիկական վիճակը՝

2.1. Ջրանցքի 1-ին հերթի 0+00-20+51, 24+10-61+00, 61+00-80+00, 80+00-129+97, 134+00-145+30, 151+70-153+10, 162+10-306+35, 311+43-443+00 հատվածներում տեղ-տեղ ջրանցքը լցված է ջրաբերուկներով և կենցաղային աղբով: 165+00-215+00 հատվածներում տեղ-տեղ ջրանցքը լցված է 2-րդ խմբի բերվածքներով: Ջրանցքի առափին, շեպերին և դիտակետերում առկա են շահագործման աշխատանքները խոչընդոտող միջին խտությամբ թփուտներ:

Ջրանցքի 1-ին հերթի 134+00-145+30, 151+70-153+10, 162+10-306+35, 200+00-210+00, 250+40-290+10, 310+10-335+00 նշագծերում տեղ-տեղ ջրանցքի շեպերի և հատակի վրա կան քայքայված հատվածներ: Մու-3, Մխ-6, Մու-8, գյուղամեջի առու Մու10, Մու-12, Մու-15,Մու-22, 1000- ոց հարթ փականները ենթակա են վերանորոգման: D=200մմ, D=150 և D=100մմ փականները ջարդված են:

2.2 Արզնի-Շամիրամի մայր ջրանցքի 2-րդ հերթի 6+60-32+20, 32+20-67+20, 67+20-118+15, 197+80-123+00, 123+00-212+00, 232+00-262+00, 262+00-274+00, 261+80-277+00, 274+00-276+30, 290+30-322+00, 322+00-443+00 նշակետերում տեղ-տեղ ջրանցքը լցված է ջրաբերուկներով: Ջրանցքի ողջ երկարությամբ առափին, շեպերին և ջրաչափական դիտակետերում առկա են շահագործման աշխատանքները խոչընդոտող միջին խտությամբ թփուտներ: Ջրանցքի ողջ երկարությամբ դիտակետերը և դիտակետերը լցված են 2րդ խմբի բերվածքներով:

Արզնի-Շամիրամի մայր ջրանցքի 2-րդ հերթի 70+60-123+20, 175+20-183+15, 370+00-420+00 նշակետերում ջրանցքի հատակի և շեպերի վրա կան քայքայված հատվածներ: Մու-2, Մու-4, Մու-7, Նազրվանի ջրթող, Բ-3, Բ-4, Սերոբի փական, թունելի ելքամաս, Մու17, Մու-18, Բ-8, Մու-25, Մու-26, Մու-28,Մու-33 հարթ

փականները ջարդված են: 1500, 1200 և 1000 մմ կոմպենսատորներից առկա են ջրի արտահոսքեր: 2 հատ D=150 փականները ջարդված են:

2.3 Քասախի ոռոգման համակարգի Ձախ ճյուղի ջրանցքի 25+00-41+20 հատվածում ջրանցքը լցված է ջրաբերուկներով: Քասախի ոռոգման համակարգի «Արագահոս» դոտացիոն ջրանցքի 0+00-63+60 հատվածում ջրանցքը լցված է ջրաբերուկներով:

III. Անհրաժեշտ է՝

3.1.Ջրանցքի նախագծային տեղամասերի բոլոր կառուցվածքների ակնադիտական զննման և վիզուալ ուսումնասիրության նախնական տվյալներով կազմել թերությունների ակտ՝ ներգրավելով շահագործող կազմակերպության մասնագետներին:

3.2 Վերը նշված և ուսումնասիրության արդյունքում հայտնաբերվող խնդրահարույց հատվածներում կատարել մաքրում բերվածքներից՝ տեղափոխելով համապատասխան աղբավայրեր, ջրանցքի շեպերի, հատակի և ջերմային կարերի քայքայված հատվածների նորոգում ցեմենտ-ավազե շաղախով և բետոնի տեղադրմամբ, անսարք փականների, հարթ փականների և կոմպերսատորների վերանորոգում:

Նախագծային աշխատանքների իրականացման ժամանակ, նախագծողը պետք է պահպանի ջրանցքի գործող հատույթի չափերը, թեքությունները անհրաժեշտ հատվածներում՝ ապահովելով նախագծային ջրթողունակությունը, ջրանցքի ջրբաժան կետերի ջրի տրման հիդրավլիկ պայմանները, ինչպես նաև ապահովելով անհրաժեշտ բացթողնվող ջրաքանակի կարգավորումը և հաշվառումը:

Անհրաժեշտ է կիրառել նորագույն տեխնոլոգիաներ ջրի կորուստները նվազագույնի հասցնելու համար: Ներառել նաև շահագործման ճանապարհների առավել վատթար հատվածների նորոգում:

IV. Առաջարկվող նախագծման աշխատանքների կատարման անհրաժեշտությունն ու իրավական հիմքերը

ՀՀ իրավանորմատիվային փաստաթղթերի դրույթների ու պահանջների համաձայն գործող յուրաքանչյուր ջրանցքի համար, շահագործող կազմակերպությունը պարտավոր է պարբերաբար իրականացնել հիդրոհանգույցի համալիր կազմի մեջ ներառված ՀՏԿ-ների տեխնիկական վիճակի զննում, ուսումնասիրություն: Վերհանել թերություններն ու շեղումները, գնահատել դրա շահագործման վիճակը, գնահատել անվտանգության ռիսկի աստիճանը և շեղումների հայտնաբերման դեպքում մշակել ու իրականացնել անհրաժեշտ միջոցառումներ՝ ՀՏԿ-ները նորմալ տեխնիկական վիճակի բերելու, վթարների ռիսկերը վերացնելու, ջրի կորուստները նվազեցնելու համար:

Պայմանավորված թվարկված պահանջներով՝ նախագծի կազմման աշխատանքների հիմք են հանդիսանում

- ՀՀ ջրային օրենսգիրքը (ՀՕ -373-Ն);
- ՀՏԿ-ների օգտագործման և անվտանգության ապահովման իրականացման կարգը (ՀՀ կառավարության որոշում՝ 1408 2003թ. թիվ 1012-Ն);
- ՀՀ Վարչապետի 2021թվակԷանի նոյեմբերի 3-ի «Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան և համալիր ծրագրի մասին» օրենքի կիրառկումը ապահովող միջոցառումները հաստատելու մասին N 1246-Ա որոշումը:

Հիմնանորոգման վերակառուցման և վերազինման ցանկացած նախագծային լուծում պետք է հիմնավորված լինի ՀՀ-ում գործող տեխնիկական նորմերի, ստանդարտների, միջպետական շինարարական նորմերի վրա (ՀՀՇՆ;СниП; ГОСТ; СТСЕВ; ЗУС; ՇՆ -2 ; ՊՍՊ և այլն):

Նախագծերի լուծումները պետք է ապահովեն գերնորմատիվային կորուստների նվազեցում :

Անհրաժեշտ է ՀՏԿ-ներում ապահովել փականային տնտեսությունների երկակի եղանակով (էլեկտրական և ձեռքով) շարժաբերման հնարավորություն, ապահովելով սահմանային և վթարային ավտոմատ տվիչներով ու անջատիչներով հուսալի և մատչելի լինեն պարզ շահագործման համար:

- Ելնելով աշխատանքների ծավալից, իրականացման համար պահանջվող ժամանակից ու ջրանցքը ամբողջությամբ ջրից ազատելու շրջանի տևողությունից, անհրաժեշտության դեպքում աշխատանքները պետք է տրոհել փուլերի, հաշվի առնելով ոռոգման շրջանի սկիզբը և ավարտը:

Նախագծողը հաշվի առնելով ոռոգման ջրի մատակարարման պարտադիր ապահովման պահանջը՝ նախագծման աշխատանքները պետք է կազմակերպի՝ ելնելով ջրանցքները ջրազրկված կարճ ժամանակահատվածից: Ջրանցքի ջրազրկման օրերի վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն կտրամադրվի նախագծողին նախապես, ամսվա կտրվածքով՝ ջրանցքի ջրազրկման օրերի քանակը 5-6 օր:

Նախագծման փուլում նախագծողը պետք է ներկայացնի՝

ա/ նախագծի նախնական տարբերակը

բ/ շինարարական աշխատանքների կատարման նախնական պլանավորում
գ/ շինարարական աշխատանքների արժեքի նախնական հաշվարկ
Նախագիծը պատվիրատուին է ներկայացվում 5 օրինակից (4 հայերեն, 1 ռուսերեն) և էլեկտրոնային կրիչով, իր մեջ պարունակում է բանվորական նախագիծ՝ իր մասնագրերով, մոնտաժման սխեմաներ և աշխատանքների կատարման տեխնոլոգիան:

** ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*
*** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկը սահմանվում է օրացուցային օրերով՝ հաշվարկն իրականացնելով ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ՏԿԵՆ ՋԿ «Ջրառ» ՓԲԸ
Երևան, Վարդանանց փակուղի 8
«Արդշինբանկ» ՓԲԸ, Նալբանդյան մ/ճ
h/h 2479000059160000,
ՀՎՀՀ 00093621
Տնօրեն
---------- Ա. ԱԲԳԱՐՅԱՆ
/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

<<ԲԻՄ ԻՆԺԵՆԵՐԻՆԳ>> ՍՊԸ
ք. Երևան, Ավան-Առինջ,1-ին միկրոր 1/7,5
<<ԱՅԴԻԲԱՆԿ>> ՓԲԸ ՆՈՐ ՆՈՐՔ մ/ճ
Հ/h11808011522300
ՀՎՀՀ 00917131
Տնօրեն՝
---------- Ա. Մկրտչյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
«16» 12 2022 թ. կնքված
N: ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԳՀԾՁԲ-22/26-1 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համար	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	71241200/8	Արզնի-Շամիրամի ջրանցքի մաքրման և ընթացիկ նորոգման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում												2000000	2000000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*
*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ՏԿԵՆ ՋԿ «Ջրառ» ՓԲԸ
Երևան, Վարդանանց փակուղի 8
«Արդշինբանկ» ՓԲԸ, Նալբանդյան մ/ճ
h/h 2479000059160000,
ՀՎՀՀ 00093621
Տնօրեն
---------- Ա. ԱԲԳԱՐՅԱՆ
/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

<<ԲԻՄ ԻՆԺԵՆԵՐԻՆԳ>> ՍՊԸ
ք. Երևան, Ավան-Առինջ,1-ին միկրո 1/7,5
<<ԱՅԴԻԲԱՆԿ>> ՓԲԸ ՆՈՐ ՆՈՐՔ մ/ճ
Հ/h11808011522300
ՀՎՀՀ 00917131
Տնօրեն՝
---------- Ա. Մկրտչյան
/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված 3
« 16 » 12 2022 թ. կնքված
N: ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԳՀԾՁԲ-22/26-1 պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«16» 12 2022 թ. կնքված
N: ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԳՀԾՁԲ-22/26-1 պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն